ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱԿԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/26

ք. Երևան «17» 05. 2019թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ. Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

Ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

Բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1476000 (մեկ միլիոն չորս հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	<<Էյչ Գրուպ>> ՍՊԸ
Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109/8	ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
ՖՆ գործառնական վարչություն	<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
900011001352	Հ/Հ 2500010488760100
00153247	ՀՎՀՀ 01254973
Վ. Օհանյան	Կ. Հարությունյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 17 » 05 2019թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/26 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	48761100/2	ԱԻՆ-ին պատկանող աշխատանքային կայանների անվտանգ աշխատանքը ապահովելու նպատակով արտոնագրված հակավիրուսային և ցանցային անվտանգության (ֆիլտր) ծրագիր կամ ծրագրային փաթեթ (Microsoft Windows համակարգիչներ, որոնք ունեն Intel Dual Core 2.5 GHz կամ բարձր պրոցեսոր և 1 GB (32-bit)/2GB (64-bit) օպերատիվ հիշողություն)-**120 հատ**), (Microsoft Windows համակարգիչներ, որոնք ունեն Intel Pentium4 2.8 GHz կամ ցածր պրոցեսոր և 512MB օպերատիվ հիշողություն)-**100 հատ**): Հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթը նախատեսված է վիրուսների, անցանկալի ծրագրային կոդերի, լրտեսական ծրագրերի, ինչպես նաև ցանցային գրոհների հայտնաբերման, կանխարգելման, հակազդման և որոշ դեպքերում վնասված ֆայլերի վերականգման համար:	դրամ	1476000	1	ք. Երևան Դավթաշեն 4,Ա.Միկոյան 109/8	Մասնակցի կողմից փաթեթի ակտիվացումը՝ 2019թ դեկտեմբեր

*Ծանոթություն – վերը նշված ծառայությունների մատուցման ցանկը համարվում է մեկ չափաբաժին

****Ծրագրային փաթեթների ակտիվացումը պետք է կատարվի 2019թ դեկտեմբերին, իսկ գործողության ժամկետը մինչև 2020 թվականի դեկտեմբեր/մեկ տարի/**

Հակավիրուսային ծրագրի տեխնիկական բնութագրիչները

- Հակավիրուսային սքանավորում իրական ժամանակում և ըստ հարցման:
- Էվրիստիկ վերլուծաբան, որը թույլ է տալիս ճանաչելու և բլոկավորելու անհայտ վնասական ծրագրեր:
- Հակավիրուսային սքանավորում ըստ ժամանակացույցի:
- Սկսել հակավիրուսային խնդիրը, ըստ ժամանակացույցի և/կամ անմիջապես օպերացիոն համակարգի բեռնավորումից հետո:
- Հակավիրուսային ստուգում RAR, ARJ, ZIP, CAB ֆորմատով արխիվների, այդ թվում գաղտնաբառով պաշտպանված, ֆայլերի ստուգում և բուժում:
- Էլեկտրոնային նամակագրության պաշտպանություն վնասակար ծրագրերից՝ մուտքային և ելքային թրաֆիկների ստուգմամբ հետևյալ պրոտոկոլներում. IMAP, SMTP, POP3, MAPI, NNTP – անկախ օգտագործվող էլեկտրոնային փոստի ծրագրային ապահովումից:
- Ինտերնետ թրաֆիկի պաշտպանություն – օբյեկտների ստուգում՝ HTTP, FTP պրոտոկոլներով համակարգիչ ներմուծվող, այդ թվում էվրիստիկ վերլուծությունների օգնությամբ, վստահելի կայքերի կարգաբերումներով:
- Բաններներից և Web էջերից անսպասելի հայտնվող (pop-up) պատուհանների բլոկավորում:
- Ֆիշինգ կայք էջերի ճանաչում և բլոկավորում:

- ICQ և MSN թրաֆիկների ստուգում համացանցային էջերի աշխատանքի անվտանգության ապահովման համար:
- Ծրագրային միջոցների անոմալ վարքի բացահայտման հնարավորություն՝ գործողությունների հաջորդականության վերլուծության միջոցով: Վնասակար ծրագրային միջոցների ետ մղում, այդ թվում նաև վնասակար ծրագրերով գաղտնագրված ծրագրային ֆայլերի վերականգնում:
- Գործածվող ծրագրերի առավելությունները սահմանափակելու ունակությունը, ինչպիսիք են ռեեստրի գրելը, ֆայլերին և թղթապանակներին հասանելիությունը: Սահմանափակումների մակարդակների ավտոմատ հայտնաբերում՝ հիմնվելով տվյալ ծրագրի հեղինակության վրա:
- BadUSB տիպի հարձակումներից պաշտպանելու մեխանիզմների առկայությունը:
- Ներկառուցված ցանցային էկրան, որը թույլ է տալիս սահմանել ցանցային փաթեթային կանոններ կոնկրետ պրոտոկոլների (TCP, UDP) և պորտերի համար: Ցանցային կանոնների ստեղծում կոնկրետ ծրագրերի համար:
- Պաշտպանություն ցանցային հարձակումներից, որոնք օգտագործում են ներխուժման հայտնաբերման և կանխարգելման համակարգերը (IDS/IPS) և աշխատում են համակարգչային ցանցերի ցանկացած տեսակի՝ ներառյալ անլար կապը:
- Բաղադրիչի առկայություն, որը թույլ է տալիս սահմանել հատուկ կանոններ, որոնք արգելում են ծրագրերի տեղադրումը և/կամ գործարկումը: Բաղադրիչը պետք է վերահսկի ծրագրային միջոցների և մետատվյալների աշխատանքը, ստուգիչ MD5 կամ SHA256 հեշ գումարը, ինչպես նաև ծրագրային ապահովման նախապես սահմանված կիրառական կատեգորիաները:
- Օգտագործողի աշխատանքի վերահսկման իրականացում մուտքի/ելքի արտաքին սարքերով ըստ սարքի տիպի և/կամ օգտագործվող ուղղով, վստահելի սարքերի ցուցակի ստեղծման հնարավորությունով՝ իրենց նույնականացման կոդով և Active Directory-ից հատուկ օգտագործողներին արտաքին սարքեր օգտագործելու արտոնություններ տրամադրելու ունակությամբ:
- Համացանցի հետ օգտատիրոջ աշխատանքի վերահսկման իրականացում, այդ թվում ակնհայտ արգելքի կամ որոշակի բնույթի միջոցներ մուտք գործելու թույլտվության կիրառում, ինչպես նաև տեղեկատվության որոշակի տեսակների (աուդիո, վիդեո և այլն) արգելափակման հնարավորություն:
- Սքանավորման գործընթացի արագացումը օբյեկտների բաց թողման հաշվին, եթե դրանք փոփոխված չեն նախկինում ստուգումից ի վեր:
- Ծառայության հեռավար թույլտվություն չունեցող դիմումից պաշտպանություն, ինչպես նաեւ գաղտնաբառով պաշտպանություն, որը թույլ կտա խուսափել վնասակար ծրագրերից և անցանկալի օգտատերերից:
- Վերոնշյալ բաղադրիչների կենտրոնացված կառավարում՝ միասնական կառավարման համակարգով միջոցով:
- Հակավիրուսային տվյալների բազայի ավտոմատ թարմացման պահանջ:
- Թարմացվող հակավիրուսային տվյալների բազաները պետք է ապահովեն հետևյալ ֆունկցիոնալ հնարավորությունների իրականացումը՝
    - Օրացուցային օրվա ընթացքում առնվազն 1 անգամ հակավիրուսային տվյալների բազաների թարմացում:
    - Թարմացման բազմաթիվ եղանակների ապահովում, այդ թվում՝ կապի ուղիներով և էլեկտրոնային տեղեկատվական կրիչներով:
    - Էլեկտրոնային թվային ստորագրության միջոցով թարմացումների ամբողջականության և նույնականության ստուգում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109/8 ՖՆ գործառնական վարչություն 900011001352 00153247	<<Էյչ Գրուպ>> ՍՊԸ ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30 <<Արմսվիսբանկ>> ՓԲԸ Հ/Հ 2500010488760100 ՀՎՀՀ 01254973
Վ. Օհանյան /ստորագրություն/ Կ.Տ	Կ. Հարությունյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«17» 05 2019թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/26 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	48761100/2	Հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթներ	-	-	-	-	-	-	-	-	-	1476000	1476000	1476000	1476000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109/8
ՖՆ գործառնական վարչություն
900011001352
00153247

Վ. Օհանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Էյչ Գրուպ>> ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010488760100
ՀՎՀՀ 01254973

Կ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
17 „ 05 2019թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/26 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
<<Էյչ Գրուպ>> ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010488760100
ՀՎՀՀ 01254973

Պատվիրատու
Արտակարգ իրավիճակների նախարարություն
Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109/8
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2019թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «Պետության կարիքների համար հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթների մատուցման» գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2019 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2019թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
17 „ 05 2019թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-19/26 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն